ԵԿԵՔ ԽՈՍԵՆՔ ԱԲՈՐՏԻ ՄԱՍԻՆ
ՀԱՃԱԽԱԿԻ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչություն, Կանանց Առողջության Գրասենյակ

Ի՞նչ է աբորտը:

Աբորտը **ընթացիկ հղիության ընդհատումն** է: Երբ հղիությունն ընդհատվում է բնականորեն, այն կոչվում է **հղիության կրելախախտ** կամ **վիժում**: Աբորտ եզրույթը սովորաբար օգտագործվում է **արհեստական ընդհատաման** համար, երբ անձը **քայլեր է ձեռնարկում՝ վերջ տալու հղիությանը**: Այս զրույցի ընթացքում մենք խոսելու ենք **արհեստական ընդհատման մասին**:

Արդյո՞ք աբորտն անվտանգ է:

Աբորտը շատ **անվտանգ է և տարածված**: Աբորտի հետ կապված բարդությունների վտանգը **14 անգամ ավելի փոքր է, քան հղիությունը մինչև վերջ տանելու հետ կապված վտանգը**: Միացյալ Նահանգներում հղիությունների մոտ 18%-ն ավարտվում է աբորտով:

Արդյո՞ք աբորտն օրինական է Կալիֆորնիայում:

Այո, **աբորտն օրինական է**: Իրականում այն **Կալիֆորնիայի նահանգի Սահմանադրության հիմնարար իրավունքներից է**: Անձինք կարող են աբորտ անել Կալիֆորնիայում՝ **անկախ իրենց տարիքից, ներգաղթի կարգավիճակից կամ նահանգում կամ դրանից դուրս բնակվելու հանգամանքից**:

Որո՞նք են աբորտ անելու տարբեր միջոցները:

Դեղորայքային աբորտը հղիության ընդհատումն է **միֆեպրիստոն (mifepristone) և միզոպրոստոլ (misoprostol) կոչվող հաբերի միջոցով**: Այս հաբերը սովորաբար ընդունվում են բժշկական գրասենյակից դուրս և թույլ են տալիս, որ աբորտը տեղի ունենա աստիճանաբար: **Արտաքաշումով աբորտը (aspiration abortion)** հղիության ընդհատում է, **երբ բուժաշխատողը պտուղը հեռացնում է արգանդից**: Այս տեսակի աբորտը կատարվում է **բժշկական կլինիկայում**:

County of Los Angeles Public Health

Ո՞րն է տարբերությունը անհետաձգելի (emergency) հակաբեղմնավորիչ հաբերի և աբորտի հաբերի միջև (դեղորայքային աբորտ):

Անհետաձգելի հակաբեղմնավորիչն օգտագործվում է **սեռական հարաբերությունից հետո**, որպեսի **կանխվի** հղիանալը: Դրան հակառակ՝ **դեղորայքային աբորտն ընդատում է ընթացիկ հղիությունը**:

Արդյո՞ք աբորտը մեծացնում է կրծքի կամ այլ քաղցկեղների վտանգը:

Ոչ, ուսումնասիրությունները **չեն գտել որևէ կապ** աբորտի և քաղցկեղի որևէ տեսակի միջև:

Արդյո՞ք աբորտն ուղղակիորեն ազդում է պտղաբերության հետագա վիճակի կամ հետագա հղիությունների վրա:

Ոչ, **չկա որևէ ապացույց**, որ աբորտ անելը նվազեցնում է հղիանալու կարողությունը (վերարտադրողականությունը՝ պտղաբերությունը), մեծացնում է վիժելու հավանականությունը կամ որևէ կերպ վնասում է ապագա հղիությունը: Մանկաբարձների և Գինեկոլոգների Ամերիկյան Քոլեջը (ACOG) ուսումնասիրել է ապացույցները և չի գտել կապ աբորտի և պտղաբերության նվազման, ինչպես նաև աբորտի և ապագա հղիության հետ կապված խնդիրների միջև:

Արդյո՞ք կա ապացույց, աբորտը վնասում է հոգեկան առողջությունը:

Ոչ, ցանկալի աբորտն անելը **վնաս չի տալիս հոգեկան առողջությանը**: Մարդիկ աբորտից հետո կարող են ունենալ այնպիսի զգացումներ, ինչպիսիք են տխրությունը կամ վիշտը, բայց մեծամասնությունը զգում է թեթևացում: Սա է իրականությունը հղիության ցանկացած պահին արվող աբորտի դեպքում՝ և գործողությունից անմիջապես հետո, և հետագա տարիների ընթացքում: Որոշ մարդիկ կարող են ունենալ նաև աբորտի հետ կապված մեղքի կամ քննադատված լինելու զգացում **ընտանիքի, մշակույթի կամ կրոնական սպասելիքների պատճառով**:

Ինչպե՞ս կարող եմ աբորտ անել:

Աբորտի մասին հավելյալ տեղեկություններ և Լոս Անջելեսի Շրջանում և ամբողջ երկրում հղիության արհեստական ընդհատման ծառայությունների ամբողջական ցանկը կարելի է գտնել Կանանց Առողջության Գրասենյակի (OWH) կայքում՝

AbortionSafeHaven.LACounty.gov